ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մեդմարկետ ՍՊԸ-ն ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/43 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Ակնաբուժական օպտիկական տոպոգրաֆ	Huvitz	HTG-1	Huvitz Co. Ltd	Եղջերաթաղանթի կորության շառավղի չափման միջակայք 3 – 38մմ: Եղջերաթաղանթի բեկման ուժի չափման միջակայք 9D ~ 110D (1.3375 եղջերաթաղանթի ռեֆռակտիվ ինդեքսի էկվիվալենտի դեպքում): Եղջերաթաղանթի գլխավոր մերիդիանների ուղղության չափման միջակայք՝ չափման տիրույթ: 0° – 180°(Չափման ճշգրտություն ըստ ISO 10343:2014): White-to-White հեռավորություն միջակայք (եղջերաթաղանթի տեսանելի տրամագիծ)՝ 7–14 մմ: Բիբի տրամագծի չափման

					միջակայք՝ 0.5–10 մմ: Աշխատանքային հեռավորություն՝ 80-100մմ: Պլասիդոյի սկավառակների քանակը՝ 24 օղակ: Վերլուծված կետերի քանակը 100,000 (Չափված կետեր՝ 6,220): Ճշգրտություն և կրկնելիություն՝ A դասի (ըստ ISO 19980:2021): Չափման անհրաժեշտ տիրույթ՝ Ø 9.8 մմ (8 մմ տրամագիծ ունեցող գնդիկի վրա), 42.20D, n = 1.3375 դեպքում: Էկրան՝ պտտվող և թեքվող 10.1 դյույմ սենսորային էկրան, 90° ձախ-աջ պտտվող: Սարքի հետազոտող մասի հորիզոնական շարժում ՝ 55 մմ (առաջ և հետ), 100 մմ (ձախ և աջ): Սարքի հետազոտող մասի ուղղահայաց շարժում ՝ 30 մմ (վերև և ներքև): Ծնոտի հենակի շարժում՝ 62 մմ (վերև և ներքև), շարժիչով վերահսկվող: Սարքի հետազոտման համար ավտոմատ ֆոկուսավորում՝ X,Y ուղղություններ՝ դիրքավորման համար, Z ուղղություն՝ աշխատանքային հեռավորության համար: Համակարգիչ՝ Ներկառուցված համակարգիչ Windows 10 օպերացիոն

						համակարգով: Քաշը 19կգ: Տոպոգրաֆիկ ծրագրային հնարավորություններ Աչքի բորբոքման և առողջության գնահատում աչքի կարմրության վերլուծության միջոցով Եղջերաթաղանթի և կոնյուկտիվայի կարմրության աստիճանը ավտոմատ կերպով վերլուծվում և քանակապես գնահատվում է: Սա հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն գնահատել աչքի բորբոքումը և ընդհանուր աչքի առողջությունը՝ բարձրացնելով ախտորոշման հուսալիությունը: Ինքնախտորոշման գնահատում՝ OSDI գլոբալ ստանդարտ հարցաթերթիկի միջոցով: Արցունքային թաղանթի ախտորոշում՝ կապույտ LED-ի վրա հիմնված ֆլուորեսցեինային պատկերագրման միջոցով: Գոլորշիացվող չոր աչքի ախտորոշում՝ թարթման միջակայքի չափման միջոցով: Սարքը չափում է թարթումների միջև ընկած միջակայքը (IBI)՝ թարթման օրինաչափությունները վերլուծելու համար: Չափումները ներկայացվում

					են թվային արժեքներով՝ թարթման հաճախականության և կանոնավորության համար։ Լիպիդային շերտի ֆունկցիա՝ արցունքային թաղանթի գույնի և նախշի ֆիքսման համար: Սարքը իրական ժամանակում ֆիքսում է արցունքային թաղանթի լիպիդային շերտը՝ հնարավորություն տալով տեսողականորեն դիտարկել գույնի և նախշի փոփոխությունները։ Վաղ կերատոկոնուսի հայտնաբերում՝ եղջերաթաղանթի ցուցանիշների հիման վրա Եղջերաթաղանթի առաջային կորության, տարածաշրջանային ձևի, արտափքման աստիճանի և էքսցենտրիկության համապարփակ վերլուծության միջոցով սարքը հաշվարկում է Կերատոկոնուսի կանխատեսման ինդեքսը (KPI)՝ գնահատելու կերատոկոնուսի հավանականությունը: White-to-White ավտոմատ չափում՝ եղջերաթաղանթի տրամագծի համար։ Պուպիլոմետրիայի վրա հիմնված բբի տվյալների ստացում: Սարքը չափում է բբիկի չափը և արձագանքը ինչպես ցերեկային,

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Медмаркет в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом <<ԱՆԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/43 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					այնպես էլ գիշերային լուսավորության պայմաններում՝ տրամադրելով տարբեր ցուցանիշներ, ներառյալ բբի նվազագույն, առավելագույն և միջին տրամագիծը, ինչպես նաև ստանդարտ շեղումը՝ գրաֆիկական տեսքով Կոնտակտային լինզաների ընտրություն՝ առանց ֆլուորեսցեինի կաթեցման: Ֆլուորեսցեինային պատկերային ֆիլտրով սիմուլյացիոն մեթոդի կիրառմամբ՝ առանց ֆլուորեսցեին ներկի անմիջական կաթեցման: Տեսողական աղավաղման գործոնների ճշգրիտ ախտորոշում՝ Զերնիկեի վերլուծության միջոցով Զերնիկեի գործակիցների և Զերնիկեի քարտեզների կիրառմամբ սարքը ճշգրիտ վերլուծում է տեսողական աղավաղման տարբեր գործոններ, ներառյալ ռեֆրակցիոն ուժի տատանումները, անկանոն աստիգմատիզմը և բարձր կարգի աբերացիաները՝ տրամադրելով տեսողական որակի վրա ազդող տարրերի վիզուալացված տվյալներ: Մեյբոմյան գեղձերի դիսֆունկցիայի աստիճանի ավտոմատ

					տեսողականորեն գնահատվում և դասակարգվում: Արցունքային մենիսկի բարձրության վերլուծություն՝ արցունքների արտադրության գնահատման համար սարքը ավտոմատ քանակապես չափում է արցունքային մենիսկի բարձրությունը՝ օբյեկտիվ գնահատելու արցունքների արտադրությունը: Այն պատկերավորում է կոպի երկայնքով ձևավորված արցունքային շերտը և թույլ է տալիս ճշգրիտ չափում իրականացնել ներառված մասշտաբով: Երբ ընտրում են կետերը, արցունքային թաղանթի բարձրությունը ավտոմատ կերպով հաշվարկվում է: Արցունքային թաղանթի կայունության ոչ կոնտակտային գնահատում՝ NIKBUT մեթոդով Սարքը չափում է արցունքային թաղանթի կայունությունը առանց կոնտակտի և իրական ժամանակում հետևում է արցունքային թաղանթի դիսկի խզման մակերեսներին: Արդյունքները տրամադրում են արցունքային թաղանթի խզման

					ժամանակի և մակերեսի քանակական վիզուալացում: Որակի հավաստագրեր՝ ISO 9001, ISO 14001, EU Declaration of Conformity, FDA Մատակարարման պայմաններ ՝ 1 տարի երաշխիքային սպասարկում: Սարքը պետք է լինի նոր 2025 կամ 2026 թ-ի արտադրման, գործարանային փաթեթավորմամբ: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված, ամբողջական փաթեթավորմամբ: Ապրանքների տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով: Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքը արտադրողի կողմից ներկայացվող ավտարիզացիոն նամակ (երաշխիքային-լիազոր նամակ): Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է՝ ապրանքը արտադրողի կողմից ներկայացվող ծագման սերտիֆիկատ և համապատասխանության հավաստագիր: